Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«____» _____ 2018 թվականի N _____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1064-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1064-Ա որոշման 2-րդ կետի

1) 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի,

2) 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Որոշման 2-րդ կետը լրացնել նոր՝ 3-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«3) հանձնաժողովի եզրակացության ձևաթղթերը՝ համաձայն N3 հավելվածի»:

3. Որոշումը լրացնել նոր՝ N3 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թվականի
_____ _____-ի
N _____որոշման

<<Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2009 թ.
դեկտեմբերի 22-ի N 1064-Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ավետիք Էլոյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ (հանձնաժողովի նախագահ)
Անահիտ Հախումյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)
	ՀՀ առողջապահության նախարարություն
	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության
	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
	ՀՀ մշակույթի նախարարություն
	ՀՀ բնապահպանության նախարարություն
	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
	ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
	ՀՀ ոստիկանություն
	Համապատասխան ՀՀ մարզպետ
	Համապատասխան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
	«Հայաստանի շինարարների միություն» ՀԿ (համաձայնությամբ)
	«Հայաստանի ճարտարապետների միություն» ՀԿ (համաձայնությամբ)
	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)»:

>>:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թվականի
_____ _____-ի
N _____որոշման

<<Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2009 թ.
դեկտեմբերի 22-ի N 1064-Ա
որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի համակարգման, արդյունավետության բարձրացման, դրան առնչվող խնդիրների քննարկման և եզրակացությունների կազմման նպատակով:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված փաստաթղթերն ու դրանց մշակման նախագծման առաջադրանքները, ինչպես նաև հաստատված փաստաթղթերի փոփոխությունները կարող են հաստատվել համայնքի ավագանու կողմից՝ միմիայն հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

3. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահն է:

4. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ոլորտի մասնագիտական կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և այլ անձինք:

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ պլանավորման փաստաթղթերի և դրանց նախագծման առաջադրանքների քննարկման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում և կարգով:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների 2/3-ից ավելին:

7. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

8. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով:

9. Հանձնաժողովի նախագահը որոշում է հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամը:

10. Հանձնաժողովի նիստերի օրակարգը հանձնաժողովի անդամներին է փոխանցվում նիստից առնվազն 3 օր առաջ:

11. Հանձնաժողովի գործավարությունը վարում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի համապատասխան վարչությունը:

12. Հանձնաժողովի նպատակը՝

1) պլանավորման փաստաթղթերի և դրանց նախագծման առաջադրանքների վերաբերյալ եզրակացությունների կազմումը.

2) համապատասխան պետական մարմինների կանոնադրական խնդիրներին առնչվող դրույթների վերաբերյալ հանձնաժողովի քննարկմանն առաջարկություններ ներկայացնելը՝ պլանավորման փաստաթղթերի կազմում ներառելու համար.

3) պլանավորման փաստաթղթերի մշակմանն ու իրագործմանը հասարակայնության մասնակցությանը նպաստելն է:

13. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) պլանավորման փաստաթղթերի և դրանց նախագծման առաջադրանքների համակողմանի քննարկումը և դրանց վերաբերյալ ընդհանուր կարծիքի ձևավորումը.

2) տարածական պլանավորման փաստաթղթերում և դրանց նախագծման առաջադրանքներում ոլորտային խնդիրների ներառման ապահովումը, ինչպես նաև տարբեր ոլորտներին վերաբերող դրույթների փոխհամաձայնեցումը.

3) պլանավորման փաստաթղթերի մշակման գործառույթների թափանցիկության ապահովմանը նպաստելը.

4) պլանավորման փաստաթղթերի մշակմանն առնչվող այլ խնդիրներ:

14. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առկա և հեռանկարային ծրագրերի ներառման ապահովումը տարածական պլանավորման փաստաթղթերում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պլանավորման փաստաթղթերի մշակման ընթացքի համակարգումը՝ անհրաժեշտության դեպքում նաև նախագծային փաստաթղթերի մշակման փուլերի քննարկման միջոցով.

3) Հանձնաժողովն կատարում է նաև ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված N2 հավելվածի 15.1 կետում նշված փորձաքննական հանձնաժողովի գործառույթները՝ քաղաքաշինական ծրագրային (տարածական պլավավորման փաստաթղթերի) մասով, իսկ հանձնաժողովի տրված եզրակացությունը փոխարինում է (համարժեք է) պետական համալիր փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի եզրակացությանը:

15. Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն է տրվում միայն բոլոր անդամների համաձայնության դեպքում: Միջգերատեսչական

հանձնաժողովը կարող է նիստերն անցկացնել նաև հարցման միջոցով՝ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ կամ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ: Հարցման միջոցով հանձնաժողովի նիստն անցկացնելու դեպքում հանձնաժողովի անդամի կարծիքը համարվում է ստացված, եթե այն արտահայտվել հանձնաժողովի անդամի կամ համապատասխան մարմնի ղեկավարի կողմից ստորագրված փաստաթղթում:

16. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համապատասխան վարչությունը:

17. Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) նիստի օրակարգը.

3) նիստին մասնակցող, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների անունները (եթե վերջիններս հրավիրված են նիստին).

4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5) ընդունված որոշումները, դրանց տարածման և (կամ) հրապարակման ձևերը:

18. Հանձնաժողովի քարտուղարը 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է նիստի արձանագրությունը, որն ստորագրվում է իր և հանձնաժողովի նախագահի կողմից:

19. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է հանձնաժողովի նիստերը.

2) հաստատում է հանձնաժողովի օրակարգը և ստորագրում հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) որոշում է հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը.

4) լսում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս համապատասխան ցուցումներ.

5) Հանձաժողովի նիստում (կամ հարցման արդյունքում) հարցի վերաբերյալ միասնական կարծիք չձևավորելու դեպքում հարցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի (այսուհետ՝ նախարարական կոմիտե) առաջիկա նիստում զեկուցելու համար:

6) հանձնաժողովի ընդունած եզրակացությունը տրամադրում է համայնքի ղեկավարին (համակցված փաստաթղթի դեպքում՝ մարզպետին)՝ նախագիծը կամ փոփոխությունը ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգով հաստատման ներկայացնելու նպատակով.

7) մերժման համապատասխան հիմքերով համայնքի ղեկավարին է վերադարձնում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող պլանավորման փաստաթղթերի նախագծերը կամ դրանց առաջադրանքների նախագծերը կամ հաստատված փաստաթղթերում փոփոխությունների առաջարկությունը:

8) իր իրավասության սահմաններում իրականացնում է հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

20. Հանձնաժողովի անդամը՝

1) հանձնաժողովի նիստերի ընթացքում կամ էլեկտրոնային հարցման եղանակով քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնում է բանավոր և (կամ) գրավոր կարծիք.

2) կարող է ներկայացնել հանձնաժողովի գործառույթներին առնչվող հարցեր՝ նիստի օրակարգում ընդգրկելու համար.

3) մասնակցում է որոշումների ընդունման համար անցկացվող քվեարկությանը, հանձնաժողովի անդամների մեծամասնության հետ համաձայն չլինելու դեպքում գրավոր ներկայացնում է հարցի վերաբերյալ իր կարծիքը:>>:

Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թվականի
_____ _____-ի
N _____որոշման

<<Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2009 թ.
դեկտեմբերի 22-ի N 1064-Ա
որոշման

ՁԵՎ N 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1- _____
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ _____ մարզի _____ համայնքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետը.

1. Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը ՀՀ _____ մարզի _____ համայնքի գլխավոր հատակագծի նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին (աղյուսակը կցվում է):

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը _____ համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

3. Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. _____ համայնքի ղեկավարին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ		
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		

Երևան, «_____» «_____» 20_____թ.

Ձև N2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- _____
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ _____ մարզի _____
համայնքները (բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի
_____ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետը.

1. Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը՝
ՀՀ _____մարզի_____
համայնքները (բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ _____
համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին (աղյուսակները կցվում են):
2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը _____ համայնքների ղեկավարներին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել _____մարզպետի որոշմամբ:

3. Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. _____ համայնքների ղեկավարին և մարզպետին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ		
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		

Երևան, «_____» «_____» 20_____թ.

Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - _____
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ _____ մարզի _____ համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերը.

1. Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը ՀՀ _____ մարզի _____ համայնքի գլխավոր հատակագում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը

2. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. _____ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ _____ մարզի _____ համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ		
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		

Երևան, «_____» «_____» 20_____թ.

Ձև N4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - _____
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ _____ մարզի _____
համայնքները (բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի
_____ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի
փոփոխության վերաբերյալ
(_____համայնքի (բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերը.

1. Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը՝

ՀՀ _____ մարզի _____
համայնքները (բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի
_____ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի
փոփոխությանը՝

ՀՀ _____ մարզի *_____ համայնքի (բնակավայրի)* Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը

նշանակությունը	

1. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. _____ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ _____ մարզի _____ համայնքի (բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ		
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		

Երևան, «_____» «_____» 20_____թ.

>>:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1064-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Անհրաժեշտությունը

ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններում կատարված փոփոխություններով պայմանավորված և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման փոփոխություններին (2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1645-Ն որոշում) համապատասխանեցնելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1064-Ա որոշման հավելվածներում և սահմանել հանձնաժողովի կողմից տրվող եզրակացության ձևաթղթերը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման ընթացքի համակարգող լիազոր մարմինը ՀՀ քաղաքաշինության կոմիտեն է: Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: ՀՀ կառավարության վերջին շրջանում կատարված փոփոխությունները արդյունքում հանձնաժողովի կազմում ընդգրկված պետական կառավարման մարմիններում կատարվել են փոփոխություններ, որոնց կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել հանձնաժողովի անհատական կազմը արդիականացնել:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի համակարգման, արդյունավետության բարձրացման, դրան առնչվող խնդիրների քննարկման և եզրակացությունների կազմման անհրաժեշտությամբ: Համապատասխան ճյուղային ոլորտների մասնակցությամբ իրականացվում է համապատասխան պետական մարմինների կանոնադրական խնդիրներին առնչվող դրույթների

վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմում առաջարկությունների ներառման ապահովումը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծի ընդունման նպատակն է փոփոխություններ կատարել ՀՀ վարչապետի 2009 դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1064-Ա որոշմամբ հաստատված միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմում և գործունեության կարգում՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի համակարգման աշխատանքները համապատասխան ճյուղային ոլորտների և հասարակայնության մասնակցությամբ արդյունավետ կազմակերպելու համար:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի համակարգման աշխատանքների թափանցիկ և արդյունավետ իրականացում:

7. Այլ տեղեկություններ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1064-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ընդունմամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1064-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջացնում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին: